



ԻՎԵՆԱՏԻՈՍ ՄԱՐՏԻՐՅԱՆ

ՋԵՔԵԼ-ՄՈՒՍԱՅԻ ԲԱՐԲԱՌԵ

(Մի գլուխ ավարտական շաբաթուրդունից)

1. ՆԱԽՆԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Ազգային-պետական լեզուն կազմավորվելուց հետո, տեղական բարբառները դատապարտված են անհետանալու, ձուլվելու ազգային լեզվի մեջ: Այդպես է պատահել մեր մի շարք բարբառների (Մեղրու, Թբիլիսիի, Ղարաբաղի, Ջուլայի) հետ, այդ ճակատագիրն էլ սպասում է Ջեքել-Մուսայի բարբառին:

Այժմ, երբ Արարատյան բարբառի հիման վրա կազմավորվել է հայ ժողովրդի ազգային-պետական լեզուն, այլևս կասկած չի կարող, որ Ջեքել-Մուսայի բարբառը դատապարտված է անհետանալու: Ջեքել-մուսացիների ճնշող մեծամասնությունը վերադարձել է Մայր Հայրենիք՝ Սովետական Հայաստան և բնակվում է նրա զանազան շրջաններում: Առաջներում լայն գործածության մեջ եղող բարբառը այժմ գործածվում է միայն «տնային-ընտանեկան» նեղ շրջանակում: Դրսում, հատարական կյանքում, Ջեքել-մուսացի հայր ստիպված է գործածել ազգային-պետական լեզուն: Տանը առանձին մեծահասակ մարդիկ են միայն, որ այժմ գործ են ածում բարբառը, այն էլ փոփոխված, նոր տերմիններով ու արտահայտություններով համարված: Այն ժամանակ, երբ Ջեքել-մուսացի հայր գտնվում էր այլազգիներով շրջապատված մի վայրում և հեռու



էր գտնվում ազգային սերտ շփումից, շփուկելու, շալա-սերվելու համար ստիպված էր պահել իր «հասարակությունը», հետևաբար՝ և իր լեզուն:

Եթե Ջեքել-մուսացի հայերը չպահեին իրենց լեզուն և իրենց կրոնը, ապա նրանք անպայման կձուլվեին շրջապատող թյուրքերի և արաբների հետ՝ ինչպես պատահել է մեր մյուս գաղութներում: Իսկ այժմ, երբ վերջապես Ջեքել-մուսացի հայերի ճնշող մեծամասնությունը գտնվում է Սովետական Հայաստանում, շրջա-

պատված է իր ազգակիցներով և մերված է նրա հետ, վերանում է ամենադուրյուն իսկ անհրաժեշտությունը՝ Ջեքել-Մուսայի «հասարակությունը», հետևաբար և բարբառը պահելու համար: Ուրեմն, Ջեքել-Մուսայի բարբառը անխուսափելիորեն պետք է ձուլվի ազգային-պետական լեզվի մեջ:

Բարբառի անհետացմանը նպաստում են նաև այլ հանգամանքներ. գտնվելով Մայր Հայրենիքում Ջեքել-մուսացի հայր փոխ է առնում նոր բառեր, նոր արտահայտություններ ու դարձվածքներ, որոնք և խախտում են առանց այն էլ տկար բարբառի կառուցվածքը և արագացնում նրա ձուլումը: Եթե Ջեքել-մուսացի հայր առաջ մեծ մասամբ մնում էր անգրագետ և տեղյակ

միայն իր բարբառին, այսօր ջերել-մուսացի նոր սերունդը Մայր-Հայրենիքում ամբողջապես ընդգրկված է դպրոցներում, նույնիսկ մեծահասակ մարդիկ դպրոց են հաճախում իրենց անգրագիտությունը վերացնելու համար: Ընտանեկան նեղ շրջանակում գործածվող բարբառը նույնպես աստիճանաբար զիջում է իր դիրքերը: Քիչ չեն դրան նպաստում նաև տեղացի ժողովրդի հետ կատարվող փոխադարձ ամուսնությունները. մի սերունդ ևս՝ և այդ բարբառով խոսող անձինք մատների վրա կհաշվվեն:

Մեր ներկա շարադրությունը, որպես անհետացման ճանապարհը բռնած մի բարբառի ուսումնասիրություն, ունի իր կարևորությունը: Բարբառի քննությունը հնարավորություն է տալիս պարզելու՝ նախ թե միջին հայերենը ո՞րքանով է պահել իր անադատությունը և ապա՝ ո՞րքանով փոխվել՝ այնպիսի մի բարբառում, որը դարերի ընթացքում կտրված է եղել ուրիշ բարբառների հետ ունենալիք շփումից և մնացել է անադատ:

Ջերել-մուսացիները իրենց բարբառը կոչում են քիսթինյուք (քրիստոնյա՝ քիսթինի՝ յուք՝ նվազական մասնիկ), որը նշանակում է «քրիստոնեի լեզու»: Այս կոչումը տվել են բարբառին՝ իրենց խոսակցական լեզուն տարբերելու համար շրջապատում գտնվող ալլազգիների, հատկապես մահմեդականների լեզուներից: Ջերել-Մուսայի բարբառով խոսում են՝ Ջերել-Մուսայի վեց գյուղերը, Քեսապի շրջանի հայերը և Լատակիա (Լավոդիկե) քաղաքի մոտ գտնվող Ղրենյմեկ գյուղաքաղաքի հայերը: Այսպիսով, մոտ 20.000 հայեր (հաշվվում է առաջին համաշխարհային պատերազմից) խոսում են այս բարբառով:

Այս բարբառով խոսել են հետևյալ գյուղերի բնակիչները.

Ջերել-Մուսայի շրջան

Գրական անունը	Տեղացիների հեշումը
1. Բիթիաս	Պիթդուա
2. Հաջի-Հաբիբի	Խապլաք
3. Յողուն-Օլուք	Յուլնուլօք
4. Խըղըր-բեկ	Իդդեր
5. Վադրֆ	Վադրֆ
6. Քերուսիե	Քապիսիք

2. ՋԵՐԵԼ-ՄՈՒՍԱ

(Աշխարհագրական, պատմական տեղեկություններ)

Նախքան բարբառի ուսումնասիրության անցնելը, հարկավոր ենք համարում հա-

Քեսապի շրջան	Տեղացիների հեշումը
Գրական անունը	Քեսապ
7. Քեսապ	Քասուք
8. Կարադուրան	Դարատուրուն
9. Սև-Աղբյուր	Սիվ-ախալար
10. Դյուզադաջ	Դյուզադաջ
11. Բաղադալ	Բաղադալ
12. Քյուրկունա	Քուրքունօ
13. Չինար	Չինուր

Ղրենյմեկ

14. Ղրենյմեկ և իր արվարձանները:

Բարբառը ունի հետևյալ մասնաճյուղերը.

1. Հաջի-Հաբիբիի մասնաճյուղ (խապլըցնյուք), որով խոսում են № 1 և 2 գյուղերի բնակիչները:

2. Յողուն-Օլուքի մասնաճյուղ (յուլնուլըցնյուք), որով խոսում են № 3, 4 և 5 գյուղերի բնակիչները:

3. Քերուսիեի մասնաճյուղ (քասպըսքնյուք), որով խոսում են Քերուսիե գյուղի բնակիչները:

4. Քեսապի մասնաճյուղ (քասպըցնյուք), որով խոսում են № 7, 8, 9, 10, 11, 12 և 13 գյուղերի բնակիչները:

5. Ղրենյմեկի մասնաճյուղ, որով խոսում են Ղրենյմեկ գյուղաքաղաքի և արվարձանների բնակիչները:

Ներկա շարադրության մեջ մենք առաջնորդվել ենք Հաջի-Հաբիբիի մասնաճյուղով: Նկատվող տարբերությունները տրված են «Հնչյունախոսություն» գլխում, իսկ առանձին ցայտուն երևույթների մասին խոսվում է իրենց համապատասխան տեղերում: Հաջի-Հաբիբիի մասնաճյուղով մեր զբաղվելու գլխավոր պատճառը եղել է այդ բարբառին ծանոթ լինելը. մինչև այժմ մեր տան մեջ խոսակցական բարբառն այդ է և մայրս ուրիշ ո՛չ մի բարբառ չգիտեմ, իսկ ես այդ բարբառով ազատ խոսում եմ, որովհետև մինչև դպրոց գնալս իմ լեզուն այդ է եղել:

Բարբառի ուսումնասիրությունից ոչ պակաս հետաքրքիր է ջերել-մուսացիների ազգագրական սովորությունների ուսումնասիրությունը, որոնցով արժե և պետք է զբաղվել:

կիրճ տեղեկություններ տալ Ջերել-Մուսայի դիրքի, վայրի, պատմական և ներկայի

կյանքի մասին, մի բան, որը ավելորդ չի կարելի համարել, եթե նկատի առնվի այն, որ շատերը, այդ մասին ոչինչ չգիտեն:

Կիրիկիայի հարավում գտնվող Ամանոս լեռնաշղթայի հարավային զառաթներից մեկի անունն է Մուսա, որի լանջերին և տեղադրված է Զեբել-Մուսան: Նա գտնվում է պատմական Անտիոք քաղաքից 10—15 կիլոմետր դեպի հյուսիս-արևմուտք և Ալեքսանդրետի (պատմական Իսսոսի) ծոցից՝ հարավ-արևելք:

Զեբել-Մուսա, այլ անուններով Մուսա Դադ, Մուսա լեռ և Սվեդիա, հայաբնակ մի փոքրիկ գավառ է Մուսա լեռան լանջերի վրա փռված: Ամենաբարձր դիրքում գտնվում է Բիթիաս գյուղը, որից հետո գալիս են աստիճանաբար մյուս գյուղերը: Շղթայի ամենավերջին գյուղը՝ Քերուսիե, գտնվում է Միջերկրական ծովի ափին, որի թզենիների պարտեզների տակ 20-րդ դարի սկզբներում հայտնաբերվեցին Սելևկիա պատմական քաղաքի ավերակները:

Ընդհանուր առմամբ, Զեբել-Մուսան բարձր դիրք ունի, չհաշված Քերուսիե գյուղը: Կլիման մերձարևադարձային է, օդը մաքուր և առողջարար: Ունի սառնորակ աղբյուրներ: Մուսա լեռը և շրջակա մյուս լեռները ծածկված են խիտ անտառներով, որոնց մեջ մեծ տեղ են գրավում կասի (դափնի) ծառերը, որոնց ձեթը անուշահոտ օձառների պատրաստման համար է գործածվում և կադմում է բնակչության եկամտի հիմնական աղբյուրներից մեկը: Նույնն է նաև բլեկնի ծառերի պարագան, որոնց փոքրիկ, յուղոտ հունտը լայն գործածության մեջ է:

Երկրագործությունն այստեղ քիչ է զարգացած, որովհետև լեռնոտ է և արգելանդ դաշտերից զուրկ: Մեծ չափերով զարգացել է այգեգործությունը և պարտիզպանությունը: Զեբել-Մուսայի սալորը, նոր-աշխարհը (զկեռ), նարինջը, դեղձը, թուզը, խաղողը, ձեթը հայտնի են Անտիոքի շրջանում: Ժողովուրդը զբաղվում է նաև շերամապահությանը:

Նախքան առաջին համաշխարհային պատերազմը (1914 թ.) Զեբել-Մուսայում ապրող հայերի թիվը հասնում էր 6.000-ի. դրանից հետո այդ թիվը տատանվում էր 5.000—7.000-ի միջև:

Մինչև 1915 թիվը, թե՛ Մայր Հայրենիքի և թե՛ Սփյուռքի հայության ճնշող մեծամասնությունը գաղափար անգամ չուներ՝ թե աշխարհում գոյություն ունի Զեբել-Մուսա անունով մի հայաբնակ շրջան: 1915 թվի Զեբել-Մուսայի աննման հերոսամարտը

նրան հայտնի դարձրեց ողջ աշխարհին: Բոլոր սկսեցին հետաքրքրվել շեբել-մուսացիներով, սկսեցին Զեբել-Մուսայի մասին գրքեր գրել, բանաստեղծություններ հորինել:

Սկզբնաղբյուրների մեջ չկա որևէ պատմական հիշատակություն ո՛չ մուսադաղցիների այդտեղ բնակություն հաստատելու և ո՛չ էլ նրանց հետագա պատմության մասին, ուստի ստիպված եղանք դիմելու բանավոր աղբյուրներին՝ ծերունիների օգնությամբ: Սակայն սրանցից ևս չհաջողվեց շատ ու քիչ ճշգրիտ տեղեկություն ստանալ, ոմանք ասում էին, թե Անիի կործանումից հետո մի խումբ հայեր փախել և հաստատվել են այդտեղ, ոմանք թե՛ Կիրիկիայից են եկել, ուրիշները նույնիսկ պնդում էին, որ հայերն այդտեղ եղել են Մեծ Տիգրանի ժամանակից. կարճ ասած՝ «որքան մարդիկ, այնքան կարծիք»:

Քանի որ պատմական փաստեր չկան, որոնցից կարելի լիներ հետևություններ հանել, ուստի հարկադրված ենք դիմել լեզվի օգնությանը:

Զեբել-մուսացիները, մեր կարծիքով, Կիրիկիայից են գաղթել և այստեղ հաստատվել: Այդ բանը մենք պնդում ենք հետևյալ շորս լեզվական փաստերի հիման վրա.

ա. Զեբել-Մուսայի բարբառում շատ գործածական է բաժնուն (ձայնափոխումը պարունի) բառը, որը նշանակում է հարուստ մարդ, կալվածատեր, աղա. օրինակ ասում են՝ «ճուղվիցուն կիղեն բարինաքը», նշանակում է՝ «հավաքվեցին գյուղի հարուստները, աղաները», կամ ասում են՝ «բարյուն մուրթ է», նշանակում է՝ «հարուստ, աղա մարդ է»: Հայտնի է, որ Կիրիկյան հայ Ռուբինյան իշխանության շրջանում պետության մեջ կային պարոններ, որոնք հայտնի ֆեոդալներ էին, ունեին մեծ քանակությամբ կալվածքներ, ինքնազուլա կառավարում էին իրենց կալվածքները և հաճախ չէին ենթարկվում Ռուբինյան իշխաններին: «Պարոն» բառի այդ իմաստը մնացել է բարբառում նույնությամբ՝ կորցնելով իր ծավալը միայն, իսկ արևմտյան և արևելյան մյուս բարբառներում կորցրել է իր նախկին իմաստը, ստացել է հարգանքի, անծանոթ մարդու դիմելու և այլ իմաստ Զեբել-Մուսայի բարբառում «պարոն»-ը պահել է իր «ֆեոդալ», հարուստ մարդ իմաստը և միայն 19-րդ դարի վերջերին գրական հայերենի ազդեցությամբ սկսեց գործածվել «պարոն» ձևը, այն էլ առանց ձայնափոխվելու՝ պարոն հնչյունով,

իսկ բարձր (պարոն) շարունակվում է գործածվել իր նախկին իմաստով: Սա պարզ ցույց է տալիս, որ Կիլիկիայի իշխանության ժամանակվա վարչական տերմինը պահպանվել է բարբառում:

բ. Բարբառում գործածվում է կու՝ գու մասնիկը բայերի խոնարհման սահմանական ներկայում, անցյալ անկատարում, շեշտված գործողություն ցույց տալիս: Հայտնի է, որ կու մասնիկը հատուկ է Կիլիկիայի շրջանի միջին հայերենին: Հետաքննելով, միջին հայերենից հետո մնացած բարբառներում կու դարձել է կը (օրինակ՝ Կոստանդնուպոլսի բարբառ, Համշենի բարբառ, իսկ Ջերբել-Մուսայի բարբառում շարունակել և շարունակում է գործածվել կու՝ գու ձևով. օրինակ՝ գու քարքում՝ գը գարդամ, կարդում եմ, գու ֆիլիմ՝ գը քալեմ, քայլում եմ):

գ. Հին հայերենում չկար ֆ տառը, նրա փոխարեն գործածվում է փ, օրինակ՝ ֆիլ՝ փիղ: Ֆ տառը հայկական այբուբենի վրա ավելացավ Կիլիկիայի շրջանում լատինական աղբյուրներից: Ջերբել-Մուսայի բարբառում գործածվում է ֆ տառը և այդ ո՛չ միայն օտարներից վերցված բառերի և հատուկ անունների, այլ և այնպիսի բառերի մեջ, որոնք հատուկ են բարբառին միայն, օրինակ՝ ֆառիլ՝ կաթի ուռչելը, և փոխաբերական իմաստով՝ հանկարծակի շղայնանալ: ֆիթիլ՝ թափել, ֆֆիլ՝ ծռել, ֆասացնիլ՝ ցավից կամ սրտնեղությունից ձայներ հանել: Սա ևս գալիս է ապացուցելու Ջերբել-մուսացիների անկասկածելի կապը Կիլիկիայի հետ:

դ. Ջերբել-Մուսայի հայերի մոտ նկատելի է այնպիսի հատուկ անունների գործածություն, որոնք հատուկ են միայն Կիլիկիայի շրջանին: Որպես հատուկ անուններ լայն գործածության մեջ են Ռաբեն, Հեքում, Լեռն: Այս անունները, հատկապես Հեքում, հետագայում դադարել են գործածությունից ուրիշ վայրերում, կամ քիչ գործածական են եղել, այնինչ Ջերբել-Մուսայի բարբառում այժմ էլ գործածվում են և միայն վերջերս դրանց եկած աղբյուրությունները սկսել են հրապարակից հետ մղել նրանց:

Ե՛րբ են հայերը հիմնվել այստեղ: Սկզբից հարկավոր է նշել, որ այդ խնդրում կոնկրետ ոչ մի թվական սահմանել հնարավոր չէ, ուստի և մնում է հավանական ենթադրություններ անել միայն: Մեզ հավանական է թվում, որ Ջերբել-մուսացիները Կիլիկիայից տեղափոխվել են այդտեղ, մաս առ մաս, երկար ժամանակվա ընթացքում:

Ջերբել-Մուսան գտնվում է Կիլիկիայի հարավում, և եղել են ժամանակներ, երբ նա Կիլիկիայի սահմանակից է եղել և կամ ուղղակի ընկել է նրա իշխանության տակ: Առաջին անգամ հայերը հավանաբար այնտեղ հաստատվել են Լեռն 2-րդ թագավորի օրոք (1185—1219 թ. թ.), երբ Անտիոքը գտնվում էր Կիլիկիայի իշխանության հովանու ներքո և Անտիոքի վրա իշխում էր Լեռնի հոգեզավակ Ռուբեն Ռայմոնդը: Ջերբել-Մուսան գտնվելով Անտիոքի մոտ, լինելով կիլիկյան և դիրքով նպաստավոր մի վայր, հավանաբար, դեպի իրեն է գրավել մի խումբ հայերի, որոնք Կիլիկիայից տեղափոխվել են այդտեղ, վայելելով Ռուբեն Ռայմոնդի օժանդակությունն ու պաշտպանությունը:

Հետագա դարերում Կիլիկիայի իշխանության անկումից հետո, 1375 թվին, երբ հայ ժողովուրդը ենթարկվել է մամլուկների, սելջուկների, մոնղոլների արհալիրքին, հավանական է, որ որոշ հայեր գաղթած լինեն Ջերբել-Մուսա որպես ավելի խույս և ավելի անառիկ վայր, խառնվելով արդեն տեղում եղած բնիկ հայերի հետ:

Թե ի՞նչ փաստական պատմություն է ունեցել Ջերբել-Մուսայի հայ բնակչությունը հետագա դարերում, ո՛չ մի աղբյուր չունենք և ոչինչ ասել չենք կարող:

Ջերբել-Մուսայի երեք հնագույն գյուղերը՝ Հաջի-Հաբիրլին, Յօղուն-Օլուքը և Քերուսին կառուցված են շատ խիտ փողոցներով, իրար կպած տներով և դռան առջև բարձր պատեր ունեցող դարբասներով ու ամուր դարբասի դռներով: Սա ցույց է տալիս, որ հալածանքի և ճնշումի ենթարկվելով, նրանք ստիպված են եղել թե՛ ամուր պաշտպանված տներ ունենալ և թե՛ իրար շատ մոտ լինել՝ աղետի դեպքում իրար անմիջապես օգնելու համար: Այս երևույթը ավելի ակնառու է դառնում, երբ նայում ենք նոր գյուղերին՝ Խոզըր-բեկ, Վազըֆ և Բիթիաս (այս երեք գյուղերը առաջացել են մյուս երեք հնագույն գյուղերից), որոնց տները կառուցված են իրարից հեռու, պարտնջների մեջ և հաճախ առանց դարբասների:

Ջերբել-Մուսայի ներքին խաղաղ կյանքը սկսում է ալեկոծվել, երբ 19-րդ դարի սկզբներին ծանրանում է թյուրքական լուծը: Վրա է հասնում հայ ժողովրդի համար աղետալի 1915 թվի... Թյուրքիան սկսում է իր հայաջինջ քաղաքականությունը: 1915 թվի հուլիս ամսին թյուրքական կառավարության ներկայացուցիչները բերում են Ջերբել-

մուսացիներին դեպի Դեյր-էզ-Ջորի անապատները տեղահանելու պետական հրամանը։ Մի խումբ հայրենասեր մարդիկ, հատկապես երիտասարդները, պնդում են, որ չպետք է կատարել կառավարության հրամանը, պիտի բարձրանալ Մուսա լեռը և ինքնապաշտպանության դիմել։ Փոքրաթիվ մի խումբ՝ գլխավորապես ծերունիներ, պնդում են, որ հարկավոր է ենթարկվել կառավարության հրամաններին։ Երկար վեճերից հետո որոշում են դիմել ինքնապաշտպանության։ Ժողովուրդն սկսում է լեռը բարձրանալ։ Փոքրաթիվ մարդիկ միայն արտագաղթի են դիմում դեպի Դեյր-էզ-Ջորի և այնտեղ էլ բնաշնչվում։

Սկսվում է Զեբել-Մուսայի հերոսամարտը, որ դրդադրեց ողջ աշխարհը։

Մուսա լեռը բարձրացած ժողովուրդը, որը անշափ մանրամասնությամբ գիտեր յուրաքանչյուր քար ու թուփ, սկսում է տեղավորվել և ամրանալ։ Կազմվում են վարչական մարմիններ՝ ղեկավորական վարչություն, պարենային վարչություն։ Զեբել-մուսացիները քիչ հրացաններ ունեին, եղածներից մեծ մասն էլ որսորդական հրացաններ էին։ Նրանք իրենց հույսը դրել էին լեռան անմատչելիության և իրենց անվահերկության վրա։ Եթե մեռնել էր պետք, ապա լավ էր պատվով մեռնել։ Պատժելու համար ուղարկված թյուրքական զորքը կոտորվում է Մուսա լեռնադաշտում, իսկ նրա զինամթերքով զինվում են զեբել-մուսացիները։ Նորից ուղարկվում են մեծ բանակներ, սակայն իզուր, բոլորն էլ շարդոսիշուր եղած հետ են դառնում։ Սակայն այսպես, այսքան ժողովրդով լեռան վրա մնալ անկարելի էր, հարկավոր էր օգնության մասին մտածել։ Կառուցում են մի լաստ, որպեսզի ծովի բացերը զնալով, որևէ դաշնակից նավի հանդիպելիս, օգնություն խնդրեն։ Բայց իզուր։ Նրանք դիմում են ուրիշ հնարի. մեծ սավանների վրա կարմիր տառերով երեք լեզուներով գրում են իրենց մասին և դաշնակիցներից օգնություն խնդրում։ Այդ սավանները դնում են Միջերկրական ծովի եզերքին գտնվող լեռան գագաթի վրա, բարձրաբերձ մի տեղում։

Թյուրք կառավարությունը, մոլեգնած, նոր զորքեր է ուղարկում Մուսա-Ռադ։ Նրանց միանում է թյուրք խուժան ամբոխը և մի հայ մատնիչ, որը ցույց է տալիս Մուսա-Ռադի ճանապարհը։ Թյուրքերը բարձրանում են

լեռ։ Սկսվում է կատաղի ճակատամարտը։ Երկու օր տևող այդ ճակատագրական ճակատամարտը վերջանում է զեբել-մուսացի հայերի հաղթանակով։ Թշնամին խուճապահար, կորուստներ տալով փախչում է։ Դրանից հետո սկսվում են մանր կռիվներ, որոնք բոլորն էլ վերջանում են զեբել-մուսացիների հաղթանակով։ Հերոսամարտի 40-րդ օրը մոտերից անցնող դաշնակիցների զրահանավեր նկատում են հայերի պաշարված վիճակը, օգնում նրանց և նավի վրա առնելով փոխադրում Սվեդի ջրանցքի կողքին գտնվող Պոր-Սաիդ վայրը։

Զեբել-մուսացի հայերը Պոր-Սաիդի գաղթավայրում ապրեցին 1915—1919 թվերին։ 1919 թվին, երբ Ֆրանսիան գրավեց Սիրիան, այդ թվում և Զեբել-Մուսան, զեբել-մուսացիները վերադարձան իրենց ծննդավայրը և սկսեցին իրենց ստեղծագործ շինարարական աշխատանքը։ Սեպտեմբերի 15-ը՝ իրենց ազատագրման օրը ազգային տոնի վերածվեց։ Այդ օրը բոլոր զեբել-մուսացիները բարձրանում էին Մուսա լեռը ուխտի։

Սակայն զեբել-մուսացիներին վիճակված չէր խաղաղ շարունակելու իրենց բնակությունը։ 1939 թվին անգլո-ֆրանսիական պետությունները Թյուրքիային շնորհեցին Իսկենդերունի (Ալեքսանդրետի) շրջանը, որի մեջ է գտնվում Զեբել-Մուսան։ Զեբել-Մուսայի հայերը, չցանկանալով մնալ թյուրքական կառավարության լծի տակ, տեղափոխվեցին Լիբանանի Այնշար կոչվող վայրը։

Հայտնի դեմոկրատ բանաստեղծ Վահե Վահյան 1939 թվի Զեբել-Մուսայի արտագաղթին նվիրված իր գողտրիկ բանաստեղծություն մեջ գրում է.

«Երազ մ' ուրիշ նոր ճաճանչե առած փայլ,
Արագածի կողերն ի վար բացվող թև,

Թող լեռնանա հինին մոխրին մեջ մուսյլ
Կարոտներով մշտաթև»։

Եվ, իսկապես, «Արագածի կողերն ի վար բացվող թևի ճաճանչը» ընդգրկեց և զեբել-մուսացի հայերին։ 1946 թվից սկսվեց հայ ժողովուրդի ամենաքաղցր երազի իրականացումը՝ ներգաղթը, վերադարձ դեպի Սովետական Հայաստան։ 1946—1947 թվերին զեբել-մուսացի հայերի ճնշող մեծամասնությունը վերադարձավ Սովետական Հայաստան և սկսեց իր նոր, երջանիկ կյանքի կառուցումը։

(Շարունակելի)